ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ԺՈՂՈՎՐԴԻՆ ՉԵՍ ԽԱԲԻ

*Պաշտօնաթերթերում ու հրապարակներում գրեթէ դադարել են ճառերը. ժողովրդական հռետորները հիմա շահաւէտ գործ են անում։ Միւսները, որոնք աւելի շատ բառերին էին տիրապետում, քան գաղափարներին, առայժմ փոքր ձեռնարկատէրեր են կամ մեծ միջնորդներ։ Ոմանք էլ ուղղակի հրապարակից փութացին սուրալ գիւղ՝ հողի տէր դառնալու։ Ոմանք էլ փոխշահաւէտ առեւտուր են սկսել, բայց չգիտես ինչ են առնում ու տալիս։ Մի խօսքով մնաց ժողովուրդը... Մնաց վերջին հրաժեշտը տալու Արցախում զոհուած իր որդիներին. «Պայքար, պայքար մինչեւ վերջ»։ Այլեւս չհասկանալով, այլեւս չընդունելով թանկագին այդ զոհերը։ Ում եւ ինչի համար։ Ո՞ւր են երեկուայ ճառասացները։ Ո՞ւմ են խաբում։ Ինչ է թաքնուած այս ամենի յետեւում։*

*Չտեսնելու տալ ժողովրդի հիասթափութիւնն ու յուսալքումը, նրա անվստահութիւնը վաղուայ նկատմամբ, նշանակում է խաբել ոչ միայն ժողովրդին։ Այո՛, ճառեր քիչ են ասում արդէն, որովհետեւ կարծես թէ այլեւս ասելու բան չկայ։ Ամէն ինչ ասուած է։ Եւ անկեղծօրէն եւ կեղծարար։ Արդէն դադարել են չարաշահել նաեւ ժողովրդի սուրբ ու նուիրական զգացումները։ Արդէն չես խաբի։ Արդէն ոչ թէ պայքար մինչեւ վերջ, պայքար գաղափարի համար, պայքար Արցախի համար, այլ պայքար ժամանակ շահելու. անգաղափար, անծրագիր, աննպատակ։ Ինչ է լինելու վաղը, երբ վերջնականապէս ժողովուրդը երես կը թեքի իրեն ժողովրդավար համարող սեփական իշխանութիւններից եւ ոչ մի հրաժարական այլեւս չի փրկի դրութիւնը։ Այլեւս ուշ կը լինի։ Ուրեմն որն է ճշմարտութիւնը եւ ինչու է այն թաքցւում ժողովրդից՝ տանելով նրան մի նոր փորձութեան։ Մի՞թէ բաւական չէր այն, ինչ տեսաւ նա վերջին մի քանի տարում։*

*Ինչու չենք ուզում իրատես լինել։ Գեներալ Մաքն էլ առանձնասենեակում, իր խորհրդականների հետ հիմնովին ջախջախեց Նապոլէոնին... բայց ստիպուած եղաւ ամբողջ բանակով անձնատուր լինել։*

*Ինչու չենք ուզում հասկանալ, թէ ինչ կարող ենք անել եւ ինչ չենք կարող։ Եւ ինչը ինչպէս պէտք է անենք։ Եւ ինչը, որ չենք կարող, ինչպէս չպէտք է անենք։ Յամենայնդէպս ժողովրդին չես խաբի։*